# ՄԵՆՔ ԿԱՒՆ ԵՆՔ, ԵՒ ԴՈՒ՝ ՄԵՐ ԲՐՈՒՏԸ

## WE ARE THE CLAY, YOU ARE THE POTTER

**(ԵՍ. 64:8, ԵՐ. 18:1-6)**

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **SEARCHING – ՈՐՈՆԵԼ**
2. **CENTERING – ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵԼ**
3. **OPENING – ԲԱՑԵԼ**
4. **SHAPING – ՁԵՒԱՎՈՐԵԼ**
5. **RESTORING – ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ**
6. **TRANSFORMING – ՎԵՐԱՓՈԽԵԼ**
7. **RETURNING – ՎԵՐԱԴԱՌՆԱԼ**
8. **REDEEMING – ՓՐԿԱԳՆԵԼ**

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

**Ես. 64:8 -** 8 Եւ հիմա, ով Տէր, դու ես մեր հայրը. մենք կաւն ենք, եւ դու՝ մեր **բրուտը (ստեղծիչը),** եւ քո ձեռքի գործ ենք մենք ամենքս:

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

The word that is translated **“formed շինեց”** comes from the Hebrew word **yatsar, and yatsar** refers to forming, stretching, squeezing, pressing, and molding something into a specific shape.

**Ծննդ. 2:7-8 - 7** Եւ Եհովայ Աստուածը հողի փոշուց **շինեց** մարդը. եւ նորա ռնգացը մէջ կենդանութեան շունչ փչեց, եւ մարդը կենդանի հոգի եղաւ: 8 Եւ Եհովայ Աստուածը արեւելքի կողմը Եդէմի մէջ մի պարտէզ տնկեց, եւ իր շինած մարդը դրաւ այնտեղ:

Եսայիա 45:9-ում – **մենք կոչվում ենք կավ**.

Եսայիա 29:16, 2 Կորնթացիներ 4:7 եւ 2 Տիմոթեոս 2:20-ում – մենք կոչվում ենք **հողի անոթներ.**

Երեմիա 18:6-ում ասվում է – որ մենք կավ ենք բրուտի ձեռքին.

## ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

**(Եր. 18:1-6)**

1 Երեմիային ուղղելով իր խօսքը՝ Տէրն ասաց. 2 Վեր կաց իջիր **բրուտի** տունը, եւ
այնտեղ ես քեզ լսել տամ իմ խօսքերը: 3 Եւ ես իջա **բրուտի** տունը, եւ ահա նա
բան էր անում ճախարակների վերա: 4 Եւ ավերուեցավ այն ամանը, որ նա շինում
էր, **ինչպէս** բրուտի ձեռքի կավին պատահում է, բայց նա դարձեալ այն **վերածեց**
մի ուրիշ ամանի, ինչպէս որ իր աչքին հաճելի թուաց անել: 5 Եւ Տիրոջ խօսքն
եղա ինձ ասելով. 6 Մի՞թէ ես չեմ կարող այս բրուտի պէս անել ձեզ, ով Իսրայէլի
տուն, ասում է Տէրը. ահա **ինչպէս** որ կավն է բրուտի ձեռքին, նույնպէս էք դուք իմ
ձեռքին, ով Իսրայէլի տուն:

## I. ԱՍՏՎԱԾ ԱՐԱՐԻՉՆ Է ԵՒ ՄԵՆՔ ՆՐԱ ՍՏԵՂԾԱԾՆ ԵՆՔ: GOD IS THE CREATOR AND WE ARE HIS CREATURES

**Ես. 29:16 -** 16 Մի՞թէ կավի պէս կհամարուի բրուտը, որ շէնքը կ՛ասի իր
շինողին՝ Նա ինձ չի շինել. եւ արարածն ասի իր արարչին թէ **Նա** չի
հասկանում: **(God knows all of our situations).**

**Հռ. 9:20-21 -** 20 Արդ, դու ո՞վ ես, ո՛վ մարդ, որ հակառակում ես Աստծուն.
միթէ ստեղծուածը կ՚ասի՞ իր ստեղծողին, թէ՝ ինչո՞ւ այդպէս ստեղծեցիր ինձ.
21 բրուտը իշխանություն չունի՞ կավի վրա նույն զանգուածից անօթ շինելու,
մէկը՝ պատուական, իսկ միյուսը՝ հասարակ:

**Like a lump of clay in the hands of the creator, we are forever being molded by life's experiences. –Feyisara Aladese**

**List several times that you have clearly seen the fingerprints of God in the circumstances of your life.**

- **ԿԱՎՆ ԱՆՕԳՈՒՏ Է, ԱՆԻՄԱՍՏ ԵՒ ԱՆՆՊԱՏԱԿ, ՄԻՆՉԵՒ ՈՐ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ՎԵՐՑՆՈՒՄ Է ԱՅՆ ԵՒ ՏԱԼԻՍ ՆՐԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ, ՁԵՒ ԵՒ ՆՊԱՏԱԿ.**
  **CLAY IS USELESS, SHAPELESS, AND HAS NO PURPOSE UNTIL SOMEONE TAKES IT AND GIVES IT PURPOSE, BEAUTY, AND SHAPE.**

**Սաղ. 139:13 -** 13 Որովհետեւ դու ստեղծեցիր իմ երիկամունքները, եւ ծածկեցիր ինձ իմ մօր որովայնում:

**Եր. 1:5 -** 5 «Դեռ քեզ որովայնում չստեղծած՝ ես ընտրեցի քեզ, եւ դեռ արգանդից դուրս չեկած՝ սրբացրի քեզ ու հեթանոսների վրա մարգարէ կարգեցի»:

**Եր. 29:11 -** 11 Որովհետեւ ես գիտեմ այն խորհուրդները, որ ես խորհում եմ ձեր մասին, ասում է Տէրը, **խաղաղության** խորհուրդները եւ ոչ թէ չարության, որ ձեզ տամ **ապագան** եւ **հույսը:**

**Ես. 49:15-16 -** 15 Մի՞թէ կինը կմոռանա իր կաթնակեր մանուկին, որ չգթա իր որովայնի ծննդեան վրա. նորանք եթէ մոռանան էլ, բայց ես քեզ չեմ մոռանա:
16 **Ահա ես իմ ձեռքի մէջ եմ նկարագրել քեզ.** **(God kneeled down)**

## II. ԱՍՏՎԱԾ ՆՈՐՈԳՈՒՄ Է ԿՈՏՐՎԱԾԸ: GOD IS REPAIRING THE BROKEN ONE.

***4 Եւ ավերուեցավ այն ամանը, որ նա շինում էր, <u>ինչպէս</u> բրուտի ձեռքի կավին պատահում է, բայց նա դարձեալ այն վերածեց մի ուրիշ ամանի, <u>ինչպէս</u> որ իր աչքին հաճելի թուաց անել:***

1. **Աստծո ձեռքերի մեջ անսահման ողորմություն կա:**

   **2 Թագ. 24:13-14 - 10 13** Եւ Գադը եկաւ Դավիթի մօտ եւ պատմեց նորան եւ ասեց նորան. Ա՞րդեօք քո երկրի մէջ եօթը տարի սով գա, կամ երեք ամիս դու փախչես քո թշնամիների առաջից եւ նորանք քեզ հալածե՞ն, կամ թէ երեք օր ժանտախտ լինի՞ քո երկրումը. Հիմա իմացիր ու տես՝ ի՞նչ խօսք տանեմ ինձ ուղարկողին: 14 Եւ Դավիթն ասեց Գադին. Ես շատ նեղութեան մէջ եմ, **աւելի լավ է Տիրոջ ձեռքն ընկնենք, որովհետեւ շատ է նորա ողորմությունը. քան մարդկանց ձեռքը:**

## III. ԱՍՏՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ՆՈՐՈԳՎԱԾ ԱՆՈԹԸ: GOD USES THE RENEWED.

***բայց նա դարձյալ այն վերածեց մի ուրիշ ամանի, ինչպէս որ իր աչքին հաճելի թուաց անել:***

**2 Տիմ. 2:20 -** 20 Բայց մի մեծ տան մէջ ոչ միայն ոսկեղէն եւ արծաթեղէն անօթներ կան. այլ փայտէ եւ հողէ էլ. կան որ **պատիվի** համար են, եւ կան որ **անարգության** համար են:

**Նոյը** – հարբել էր:

**Աբրահամը** – ծեր էր:

**Յակոբը** - Խաբեբա էր:

**Հոբը** - Սնանկ, բանկրոտ վիճակի մեջ էր:

**Հովսեփը** - մերժված էր:

**Մովսեսը** - Խոսելու խնդիրներ ուներ:

**Սամսոնը** - կանանց հետ խնդիրներ ուներ:

**Գեդեոնը** - Վախենում էր:

**Ռախաբ** - մարմնավաճառ էր:

**Նոյեմին** - այրի էր:

**Դավիթ** - շնացավ և մարդասպան էր:

**Եղիան** - ինքնասպան էր ուզում լինել:

**Երեմիա** - երիտասարդ էր:

**Հովնանը** - Աստծո ներկայությունից փաղչում էր:

**Սամարացի կինը** – բաժանված էր:

**Պետրոսը** – երեք անգամ մերժեց Քրիստոսին:

**Մարթան** - անհանգիստ և մտահոգված էր:

**Զաքեոսը** - կարճ հասակ ուներ և փողասեր էր:

**Աշակերտները** – աղոթելիս քնել էին:

**Պողոսը** - փարիսեցի էր, հալածում էր քրիստոնյաներին, և Ստեփանոսի մահվան վկան էր:

- **Անոթներ որ անարգության համար էին դարձան պատվի անոթներ:**

**1 Կոր. 1:27-28 -** 27 Այլ այս աշխարհի հիմարներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ իմաստուններին. եւ աշխարհիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամաչեցնէ զօրաւորներին: 28 Եւ աշխարհքիս անտոհմներին եւ անարգուածներին Աստուած ընտրեց՝ եւ ոչինչներին, որ մի բան լինողներին ոչնչացնէ: